ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շիրակի արհեստների և նորարարական տեխնոլոգիաների պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար.

- «Ոսկերչություն» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության վարպետ՝ 1 դրույք
- «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասախոս – 36 դասաժամ
- «Հասարակագիտություն» առարկայի դասախոս – 150 դասաժամ
- «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս – 261 դասաժամ
- Հայոց լեզվի և հայ գրականության դասախոս – 288 դասաժամ /հայոց լեզու՝ 144 դասաժամ, գրականություն՝ 144 դասաժամ/
- Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների դասախոս - 144 դասաժամ
- Հաղորդակցություն մոդուլի դասախոս – 180 դասաժամ
- «Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ» առարկայի դասախոս – 108 դասաժամ

Թափուր տեղերի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներն են.

- վարպետի դեպքում՝ առնվազն մասնագիտական կրթություն կամ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ զբաղմունքի բնագավառում գործունեության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:
- հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում /«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն/՝ բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հոկտեմբերի 23-ից մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 10-ին՝

- ✓ ժամը 10:00-ին՝ «Ոսկերչություն» մասնագիտության վարպետ
- ✓ ժամը 11:00-ին՝ «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության վարպետ
- ✓ ժամը 12:00-ին՝ «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասախոս
- ✓ ժամը 13:00-ին՝ «Հասարակագիտություն» առարկայի դասախոս
- ✓ ժամը 14:00-ին՝ «Կաշվե իրերի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության մասնագիտական մոդուլների դասախոս
- ✓ ժամը 15:00-ին՝ հայոց լեզվի և հայ գրականության դասախոս
- ✓ ժամը 16:00-ին՝ հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների դասախոս
- ✓ ժամը 17:00-ին՝ «Հաղորդակցություն» մոդուլի դասախոս
- ✓ ժամը 18:00-ին՝ քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքների դասախոս

Մրցույթը տեղի կունենա ՀՀ ԿԳՄՄՆ «Շիրակի արհեստների և նորարարական տեխնոլոգիաների պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Գյումրի, «Անի» թաղամաս, 11 փողոց, 5/2 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել /0312/ 6-64-07 հեռախոսահամարով:

Քոլեջի մասին՝ gyumriusumnaran4.am